ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2025

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 8

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 11

«Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան հ. 5 ավագ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 14

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ալավերդու Ստեփան Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 17

«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 20

«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 22

ՀՀ Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 24

«Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 26

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿիրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 28

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ 30

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և հասարակության մեջ լիարժեք և հավասար մասնակցության նախապայման է: Առանց ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող հավասար մասնակցություն ունենալ հասարակական կյանքում:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովումը մարդու հիմնարար իրավունքների իրացման հիմնական պայման է: Մատչելիության ապահովումը պետք է դիտարկվի որպես շարունակական և համակարգային գործընթաց, որը պահանջում է պետական մարմինների, համայնքների, կազմակերպությունների և հասարակության համատեղ և պատասխանատու մասնակցություն, ինչը կնպաստի հավասար հնարավորությունների ամրապնդմանը:

Մատչելիությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) ամրագրված հիմնական սկզբունքներից է, որը կարևոր նախապայման է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու, կարծիքի արտահայտման ազատության և այլ իրավունքների իրացումն ապահովելու համար:

Մատչելիության ապահովման պարտավորությունն ամրագրված է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես, Կոնվենցիային վերաբերող մեկնաբանություններում, Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանով ամրագրված դրույթներում և այլն:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում:

Կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր նոր շենքերն ու շինությունները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք ամբողջությամբ մատչելի

լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանելով համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Մեկնաբանության համաձայն՝ մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացող մատչելիության հիմնահարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի համար ուսուցողական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որը ներառում է նաև քաղաքաշինական գործունեության իրականացման մեջ ներգրավված բոլոր սուբյեկտների վերապատրաստումները:

Կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել ֆիզիկական միջավայրի մատչելիությունը և՛ քաղաքներում, և՛ գյուղական համայնքներում:

Հաշվի առնելով վերոգրյալը և կարևորելով, ի թիվս այլնի, նաև նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիության երաշխավորումը՝ Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ սույն զեկույցի մշակման շրջանակներում Պաշտպանի աշխատակազմը 2025 թվականի ընթացքում իրականացրել է մի շարք մշտադիտարկման այցեր նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատություններ, ուսումնասիրել է այդ ուսումնական հաստատությունների ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նաև նախագծային փաստաթղթեր)՝ նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում մատչելիության սկզբունքների ապահովումը դիտարկելու նպատակով:

Նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում մատչելիության սկզբունքների ապահովումը դիտարկելու նպատակով կատարված մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության համար ընտրվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 2093-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 1-ով հաստատված ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ընդգրկված կառուցված, հիմնանորոգված կամ վերակառուցված և «ավարտված» կարգավիճակն ունեցող ուսումնական հաստատությունները: Ուսումնական հաստատությունները հիմնականում ընտրվել են ՀՀ մարզերից:

Մարդու իրավունքների պաշտպանն առանցքային է համարում Որոշմամբ սահմանված ծրագրի իրականացումը և կարևորում է նման ծրագրերի շարունակականությունը: Միևնույն ժամանակ, առանցքային է նմանատիպ կարևորագույն դերակատարություն ունեցող ծրագրերի շրջանակներում՝ նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում

մատչելիության սկզբունքների ապահովումը, որը կարևոր նախապայման է միջավայրի մատչելիության երաշխավորման տեսանկյունից:

Մինչդեռ՝ իրականացված մշտադիտարկման այցերը և նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում են, որ ուսումնական հաստատությունների նոր կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացում առկա են մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված մի շարք համակարգային խնդիրներ:

Մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես, արձանագրվել են.

- ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերում մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված խնդիրներ:
- փաստացի կատարված շինարարական աշխատանքների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ:
- նախագծային փաստաթղթերի և փաստացի կատարված շինարարական աշխատանքների անհամապատասխանության հետ կապված խնդիրներ:
- Ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների փաստացի կարգավիճակի և Որոշմամբ նշված «կառուցված», «հիմնանորոգված», «վերակառուցված», «ավարտված» կարգավիճակների միջև անհամապատասխանության հետ կապված խնդիրներ:

Ընդ որում, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիության ապահովման հետ կապված այլ խնդիրներ ևս, որոնց անդրադարձ կկատարվի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման շրջանակներում: Անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներն անմիջապես հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը նվիրված է ուսումնական հաստատությունների նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում մատչելիության սկզբունքների ապահովման առնչությամբ առկա խնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը:

Դիտարկման նպատակով ընտրվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 2093-Ն որոշման հավելված 1-ով հաստատված ցանկում ընդգրկված «կառուցված», «հիմնանորոգված» կամ «վերակառուցված» և «ավարտված» կարգավիճակն ունեցող ուսումնական հաստատությունները:

Դիտարկումն իրականացվել է մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով: Աշխատանքներում ընդգրկված է եղել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համընդհանուր դիզայնի սկզբունքներին տիրապետող փորձագետը, ով ոլորտում ունի համապատասխան փորձառություն, ճարտարապետություն և դիզայն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն: Մշտադիտարկման այցերին իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով խորհրդի անդամների և հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ:

Մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությանը, դրա արդյունքում խնդիրների արձանագրումն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը իրականացվել է՝ հիմք ընդունելով Կոնվենցիայով սահմանվող կարգավորումները, Կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանությունը, ՄԱԿ-ի կողմից մշակված մարդու իրավունքների մոնիթորինգի ուղեցույցները, օրինակ՝ Մարդու իրավունքների մոնիթորինգի հիմնական սկզբունքները, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից մարդու իրավունքների ազգային ինստիտուտների համար մշակված մշտադիտարկման և փաստահավաքության ուղեցույցը, ինչպես նաև միջազգային մի շարք ստանդարտներ (օրինակ՝ ISO միջազգային ստանդարտները՝ Building construction Accessibility and usability of the built environment):

Զեկույցի մշակման նպատակով ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել նաև իրավասու պետական մարմիններից ստացված անհրաժեշտ փաստաթղթերը:

Զեկույցի նախնական տարբերակը նեկայացվել և քննարկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և

մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ կազմակերպված՝ «Մատչելիություն: Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» թեմայով համաժողովի ընթացքում, որին մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, գործադիր իշխանության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 2-ին մշտադիտարկման այց են իրականացրել ***Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված/վերակառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ համակարգային խնդիրներ:

Մասնավորապես, արձանագրվել է, որ կառուցված մասնաշենքի գլխավոր մուտքի թեքահարթակի վրա բացակայում էր երկրորդ բռնաձողը, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնաձողերով պատնեշներ: Բացի այդ, թեքահարթակի վերևի հատվածում բացակայում էր շվաքարանը և շենքի ջրահեռացման խողովակը գտնվում էր անմիջապես թեքահարթակի վրա, սակայն Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով: Հաստատության կառուցված մասնաշենքի գլխավոր մուտքի հարթակի (որը փողոցի նիշից գտնվում էր մոտավորապես 50-60 սմ. բարձրության վրա) ձախ հատվածում նույնպես բացակայում էին բռնաձողերը:

Բացի այդ, վերևի նիշից դեպի ներքև նայելիս, առկա էր գույների միաձուլում (հատակ և աստիճան), օգտագործված չէր գունային կոնտրաստ:

Հաստատության մարզադահլիճը գտնվում էր կառուցված մասնաշենքի առաջին հարկում: Մարզադահլիճի երկրորդական ելքի մոտ առկա էին աստիճաններ, ինչը ոչ մատչելի լինելուց բացի, կարող է խոչընդոտ հանդիսանալ տարհանման անհրաժեշտության դեպքում: Երկրորդական ելքի սանդուղքները նույնպես չունեին բռնաձողեր, սակայն Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնաձողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան: Բացի այդ, վերևի նիշից դեպի ներքև նայելիս, նույնպես առկա էր գույների միաձուլում (հատակ և աստիճան), օգտագործված չէր գունային կոնտրաստ:

Հաստատության հանդիսությունների սրահը գտնվում էր վերակառուցված մասնաշենքի կիսանկուղային հարկում, և առաջին հարկից դեպի կիսանկուղային հարկ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով, որոնք նույնպես չունեին բռնաձողեր և բացակայում էր գունային կոնտրաստը: Հարկ է նշել, որ չկար հանդիսությունների սրահ հասնելու այլընտրանքային ճանապարհ:

Հաստատության վերելակներից մեկն այցի պահին չէր աշխատում:

Երկու մասնաշենքերի սանհանգույցները մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար: Վերակառուցված մասնաշենքի տղաների և աղջիկների սանհանգույցները գտնվում էին առաջին հարկում և սանհանգույցների դռները բացվում էին դեպի ներս, իսկ սանհանգույցների վերջին խցիկների դռները բացակայում էին:

Հանդերձարաններում առկա սանհանգույցի և լոգարանի դռների լայնությունը՝ 0,57 մ. էր, մինչդեռ Հավելվածի 5. 2. 11-րդ կետի համաձայն՝ պատերում դռների և բացվածքների, ինչպես նաև սենքերից ու միջանցքից սանդղավանդակ տանող ելքերի լայնությունը չպետք է լինի 0,9 մ-ից պակաս: Բացի այդ, նշված դռների, ինչպես նաև Հաստատությունում մի շարք այլ սենյակների դռների վրա բացակայում էին տեղեկատվության նշանները, մինչդեռ Հավելվածի 5.6.11-րդ կետի համաձայն՝ Շենքի ներսում սենքերի տեղեկատվության նշանակումները պետք է կրկնօրինակվեն ռելիեֆային նշաններով և տեղադրվեն դռան մոտ, բռնակի կողմից և ամրացված լինեն 1,4-1,75 մ բարձրության վրա: Հանդերձարաններում և զգեստապահարաններում համարակալումը պետք է լինի ռելիեֆային և կոնտրաստ ֆոնի վրա:

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 5-ին մշտադիտարկման այց են իրականացրել ***«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ, թեև Հաստատությունը նոր կառուցված էր, և տրամադրված տեղեկատվության համաձայն՝ շինարարական աշխատանքներն ավարտվել էին 2023 թվականին:

Հաստատությունն ուներ մի քանի մուտքեր, որոնցից ոչ բոլորն էին մատչելի:

Գլխավոր մուտքին կից առկա կանաչապատ տարածքի հետիոտնային ճանապարհի միայն մեկ հատվածում էր առկա նիշերի տատանում:

Հաստատությունում առկա էր հաշմանդամություն ունեցող անձանց համար մեկ մատչելի սանհանգույց, որի կահավորումն ամբողջական չէր, իսկ մնացած ոչ մատչելի սանհանգույցների դռները բացվում էին դեպի ներս:

Հաստատության մարզադահլիճը գտնվում էր առաջին հարկում, տղաների և աղջիկների հանդերձարաններում կային սանհանգույց և լոգարան, որոնք մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հանդերձարանների դռների լայնությունը՝ 75 սմ. էր, մինչդեռ Հավելվածի 5. 2. 11-րդ կետի համաձայն՝ պատերում դռների և բացվածքների, ինչպես նաև սենքերից ու միջանցքից սանդղավանդակ տանող ելքերի լայնությունը չպետք է լինի 0,9 մ-ից պակաս:

Հաստատությունն ուներ նաև բացօթյա մարզադաշտ, որի մուտքը աստիճանաձև էր:

Հաստատության հանդիսությունների սրահը գտնվում էր առաջին հարկում, սակայն դահլիճում նստարանների հարթակները ընդհատումներով էին:

Այցի ընթացքում արձանագրվել էր նաև ջրահեռացման հետ կապված խնդիր: Մասնավորապես, Հաստատության տարածքում բացակայում էին առվակները, ինչի հետևանքով ջրի մեծ կուտակումներն առաջացրել էին նստվածքներ և խոնավություն նկուղային հարկում: Բացի այդ, բակային տարածքում նախկինում հարթ կառուցված հետիոտնային ճանապարհները և կանաչ գոտիները վնասվել էին, ինչի պատճառով դրանց վրա առաջացել էր նստվածք և դրանք դարձել էին անհարթ և ոչ մատչելի:



Արձանագրվել են նաև խնդիրներ Հաստատության նախագծանախահաշվային փաստաթղթերի և փաստացի կառուցված շինության միջև: Այսպես, օրինակ, Հաստատության նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան էջերի գծագրերի միջև և նշված էջերի գծագրերի և կառուցված թեքահարթակի միջև առկա է անհամապատասխանություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է փաստել, ՄԻՊ ոլորտային փորձագետի դիտարկմամբ հնարավոր էր առաջնորդվել Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերով, քանի որ այցի պահին արձանագրվել էր, որ կար բավարար տարածություն թեքահարթակը նշված տարբերակով կառուցելու համար:

Կառուցված թեքահարթակ

Թեքահարթակի գոյություն ունեցող տեսքը (դիագրամում կարմիր գույնով նշվածը) Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերի համեմատությամբ (կանաչ, կապույտ գույներով նշվածը)

«Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան հ. 5 ավագ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 16-ին մշտադիտարկման այց են իրականացրել ***«Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան հ. 5 ավագ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով հիմնանորոգված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ, չնայած տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Հաստատությունը հիմնանորոգումից հետո շահագործման է հանձնվել 2021 թվականին:

Մասնավորապես, այցի ընթացքում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

Հաստատությունն ուներ չորս մասնաշենք, որից երեքը՝ հիմնանորոգված: Հաստատության գլխավոր մուտքի մոտ և ներսում առկա թեքահարթակները չունեին երկրորդ բռնածողեր, իսկ թեքահարթակներից մեկը երկու կողմից չուներ բռնածողեր և մատչելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար, չնայած Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնածողերով պատնեշներ:

Հաստատության մարզադահլիճը և հանդիսությունների սրահը գտնվում էին Հաստատության առաջին հարկում, և այնտեղ հասնելու ճանապարհը ոչ մատչելի թեքահարթակն էր և աստիճանները: Տղաների և աղջիկների հանդերձարաններն առանձնացված էին, սակայն այցի պահին չունեին տարբերանշաններ:



Հանդերձարաններում առկա էին լոգարաններ և սանհանգույցներ, որոնց դռների լայնությունը 60-63սմ. էր, մինչդեռ Հավելվածի 5. 2. 11-րդ կետի համաձայն՝ պատերում դռների և բացվածքների, ինչպես նաև սենքերից ու միջանցքից սանդղավանդակ տանող ելքերի լայնությունը չպետք է լինի 0,9 մ-ից պակաս:

Դահլիճում բեմի նիշ հասնելու համար օգտագործվում են միայն աստիճաններ:

Հաստատությունը չուներ վերելակներ: Հաստատության «Կենսաբանություն» առարկայի համար նախատեսված դասասենյակը գտնվում էր 2-րդ հարկում, իսկ «ֆիզիկա» առարկայի համար նախատեսվածը՝ 3-րդ, իսկ քանի որ Հաստատությունը չուներ վերելակներ, նշված դասասենյակներ հասնել հնարավոր էր միայն աստիճանների միջոցով:

Հաստատությունն ուներ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միայն մեկ սանհանգույց, թեև յուրաքանչյուր հարկում առկա էին տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցներ: Այնուամենայնիվ, այցի պահին մեծ մասի վրա բացակայում էին «տեղեկատվության նշանները», մինչդեռ Հավելվածի 5.6.11-րդ կետի համաձայն՝ շենքի ներսում սենքերի տեղեկատվության նշանակումները պետք է կրկնօրինակվեն ռելիեֆային նշաններով և տեղադրվեն դռան մոտ, բռնակի կողմից և ամրացված լինեն 1,4-1,75 մ բարձրության վրա:

Հանդերձարաններում և զգեստապահարաններում համարակալումը պետք է լինի ռելիեֆային և կոնտրաստ ֆոնի վրա:

Հաստատության հիմնանորոգված եռահարկ մասնաշենքի 3-րդ հարկի դասասենյակներից մեկի միջով դեպի տարհանման ելք տանող աստիճանավանդակի և պատի միջև առկա բաց տարածությունը ձևավորում էր անկյունային բացվածք, որն իր հերթին ստեղծում էր բարձր ռիսկային իրավիճակ, մասնավորապես նշված բացվածքի մեջ ոտքը դնելու դեպքում՝ անձը կարող է կորցնել հավասարակշռությունը:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ալավերդու Ստեփան Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 23-ին հաշմանդամություն ունեցող անձի հետ համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել ***Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ալավերդու Ստեփան Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով հիմնանորոգված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ համակարգային խնդիրներ:

Ուշադրության է արժանի այն, որ Ցանկում ընդգրկված հիմնանորոգված ուսումնական հաստատության «ավարտված» կարգավիճակի ու աշխատանքների փաստացի կատարվածության միջև արձանագրվել է անհամապատասխանություն, քանի որ Հաստատությունն այցի պահին ամբողջ ծավալով հիմնանորոգված չէր:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ Հաստատության մուտքի մոտ գտնվող միակ թեքահարթակը մատչելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար, մասնավորապես՝ դրա մակերևույթը հարթ չէր, թեքահարթակի վերին նիշի և հիմնական հարթակի միացման

հատվածում առկա էր նիշերի տարբերություն, չնայած Հավելվածի 5.1.7-րդ կետով սահմանվում է, որ հետիոտնի ճանապարհների, մայթերի և թեքահարթակների համար որպես ծածկույթ չի թույլատրվում լցովի կամ խոշորկառուցվածքային նյութերի օգտագործումը, ինչը կխոչընդոտի անվասայլակներով կամ հենակներով տեղաշարժվելուն: Բետոնե սալերից ծածկույթները պետք է լինեն հարթ, իսկ նրանց միջև կարանների լայնությունը՝ 0,015 մ-ից ոչ ավելի: Բացի այդ, թեքահարթակը չուներ

բռնածողեր, չնայած Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնածողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան: Խնդրահարույց է նաև այն, որ ջրահեռացման խողովակն

անմիջապես թեքահարթակի վրա էր, մինչդեռ, Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

Հաստատության գլխավոր մուտքի դուռն ուներ շեմ, մինչդեռ, Հավելվածի 5.2.11-րդ կետի համաձայն՝ դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:

Հաստատություն մուտք գործելուց հետո աջից և ձախից առկա էին 2 աստիճանավանդակներ, ինչը անհնարին էր դարձնում հենաշարժողական խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը, քանի որ նշված հատվածում բացակայում էր թեքահարթակը, Հաստատությունը չուներ նաև վերելակ:

Հաստատության մարզադահլիճը գտնվում էր առաջին հարկում: Մարզադահլիճի դուռը ուներ շեմ և մարզադահլիճի և դռան նիշերը գտնվում էին տարբեր մակարդակների վրա: Տղաների և աղջիկների հանդերձարանները չունեին դռներ և մարզադահլիճի նիշից բարձր էին:

Հաստատության սանհանգույցները մատչելի չէին, դրանց դռները նույնպես ունեին շեմեր:

Հաստատության աստիճանավանդակների վերևի նիշից դեպի ներքև նայելիս առկա էր գույների միաձուլում (հատակ և աստիճան), օգտագործված չէր գունային կոնտրաստ:

Հաստատության դահլիճը գտնվում էր միջանցքում և դեպի բեմի նիշ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով:

Հաստատության դասասենյակների անվանումները գրված էին փոքր տառաչափով, տեղադրված էին աչքի մակարդակից բարձր:

Հաստատության ետնամասում գտնվող երկու ելքերի սանդուղքները չունեին բռնածողեր, մինչդեռ Հավելվածի 5.2.2-րդ կետի համաձայն՝ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնածողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 30-ին հաշմանդամություն ունեցող անձի հետ համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել ***«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ համակարգային խնդիրներ:

Մասնավորապես, Հաստատության գլխավոր մուտքը երկու կողմից ուներ թեքահարթակներ, որոնց թեքությունը մատչելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար, և բացակայում էր երկրորդ բռնածողը, մինչդեռ Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնածողերով պատնեշներ:



Սանհանգույցների լույսի անջատիչ կոճակները տեղակայված էին բավականին բարձր (180 սմ.), մինչդեռ Հավելվածի 5.6.8-րդ կետի համաձայն՝ սենքերում անջատիչները և վարդակները պետք է նախատեսել հատակի մակարդակից 0,8 մ բարձրության վրա:

Հաստատությունն ուներ նաև բացօթյա մարզադաշտ, որտեղ տանող ճանապարհը մատչելի չէր, քանի որ դռան շեմը բավականին բարձր էր, մինչդեռ Հավելվածի 5.2.11-րդ կետի համաձայն՝ դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:



Բացօթյա մարզադաշտ տանող ճանապարհին առկա էին թեքահարթակներ, որոնցում բացակայում էին երկրորդ բռնաձողերը, մինչդեռ Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնաձողերով պատնեշներ: Բացի այդ, ջրահեռացման խողովակն անմիջապես թեքահարթակի վրա էր, սակայն Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 2-ին մշտադիտարկման այց են իրականացրել ***«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ, թեև ըստ տրամադրված տեղեկատվության՝ Հաստատության շինարարական աշխատանքներն ավարտվել էին 2023 թվականին:

Այցի արդյունքում արձանագրվել է, որ Հաստատությունն ուներ մի քանի մուտքեր, որոնցից ոչ բոլորն էին մատչելի:

Հաստատության գլխավոր մուտքի թեքահարթակը չուներ բռնաձողեր, մինչդեռ Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնաձողերով պատնեշներ: Բացի այդ, ջրահեռացման խողովակը գտնվում էր անմիջապես թեքահարթակի վրա, սակայն Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով: Հաստատության մուտքերից մեկի սանդուղքները նույնպես չունեին բռնաձողեր:

Հաստատության հանդիսությունների սրահը գտնվում էր առաջին հարկում, սակայն մուտքից դեպի բեմ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով, որը նույնպես չուներ բռնածողեր: Դահլիճի ելքի դուռը դեպի բակ ուներ շեմ, մինչդեռ, Հավելվածի 5.2.11-րդ կետի համաձայն՝ դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց

բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:

Հաստատությունում առկա էին հաշմանդամություն ունեցող անձանց համար երկու մատչելի սանհանգույցներ, որոնց կահավորումն ամբողջական չէր:

Բացի այդ, մատչելի սանհանգույցների դռների լայնությունը 70 սմ. էր, մինչդեռ Հավելվածի 5. 2. 11-րդ կետի համաձայն՝ պատերում դռների և բացվածքների, ինչպես նաև սենքերից ու միջանցքից սանդղավանդակ տանող ելքերի լայնությունը չպետք է լինի 0,9 մ-ից պակաս: Հաստատության մարզադահլիճը գտնվում էր առաջին հարկում, հանդերձարաններում կային սանհանգույց և լոգարան,

որոնք մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հաստատության հոսանքի ավտոմատ անջատիչների տուփը գտնվում էր երեխաների համար հասանելի բարձրության վրա:

ՀՀ Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 2-ին մշտադիտարկման այց են իրականացրել ***ՀՀ Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց»*** ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ, չնայած տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Հաստատությունը նոր կառուցված էր, և շինարարական աշխատանքները ավարտվել էին 2024 թվականին:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ Հաստատության ոչ բոլոր մուտքերն են մատչելի:

Հաստատության գլխավոր մուտքի սանդուղքներում բացակայում էին բռնաձողերը, մինչդեռ Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնաձողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Բացի այդ, վերևի նիշից ներքև նայելիս, առկա էր գույների միաձուլում (հատակ և աստիճան), օգտագործված չէր գունային կոնտրաստ:

Հաստատության մարզադահլիճը գտնվում էր առաջին հարկում, հանդերձարաններում առկա սանհանգույցը և լոգարանը մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար, բացի այդ լոգարանի ներսում առկա էր շեմ:



Հաստատության հանդիսությունների սրահը գտնվում էր առաջին հարկում, սակայն մուտքից դեպի բեմ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով: Բացի այդ, դահլիճում նստարանների հարթակները ընդհատումներով էին:



Այցի ընթացքում արձանագրվել էր նաև ջրահեռացման հետ կապված խնդիր: Մասնավորապես, Հաստատության տարածքում բացակայում էին առվակները, ինչի հետևանքով ջրի մեծ կուտակումներն առաջացրել էին նստվածքներ և խոնավություն նկուղային հարկում: Բացի այդ, բակային տարածքում նախկինում հարթ կառուցված հետիոտնային ճանապարհները և կանաչ գոտիները վնասվել էին, ինչի պատճառով դրանց վրա առաջացել էր նստվածք և դրանք դարձել էին անհարթ և ոչ մատչելի:

Հաստատության բացօթյա մարզադաշտի մուտքը մատչելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 7-ին մշտադիտարկման այց են իրականացրել «Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով հիմնանորոգված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ:

Հաստատությունն ուներ երկու մասնաշենք: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մեկ մասնաշենքը հիմնանորոգված էր և շահագործման էր հանձնվել 2021 թվականին, իսկ մյուս մասնաշենքը՝ կառուցված 1966 թվականին, հիմնանորոգված չէր:

Հաստատության դարպասին հարող տարածքը, գլխավոր և հետևի մուտքերի մոտ առկա թեքահարթակները մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գլխավոր մուտքի թեքահարթակի 2-րդ բռնաձողը բացակայում էր, մինչդեռ Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնաձողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան: Բացի այդ, ջրահեռացման խողովակն անմիջապես թեքահարթակի վրա էր, մինչդեռ, Հավելվածի 5.2.2-րդ կետով սահմանվում է, որ մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

Մյուս մասնաշենքերի մատչելի մուտքերի թեքահարթակները չունեին 2-րդ բռնաձողեր:

Հաստատությունն ուներ երեք հարկ, բոլոր հարկերում առկա էին վերելակներ, սակայն այցի պահին 2-րդ և 3-րդ հարկերում գտնվող վերելակները գտնվում էին անսարք վիճակում:

Հաստատության առաջին հարկում առկա էր հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մեկ սանհանգույց: Առաջին հարկում գտնվող մարզադահլիճ տանող ճանապարհը աստիճաններով էր, սակայն այցի պահին Հաստատության անձնակազմը նշեց, որ Հաստատությունն ունի շարժական թեքահարթակ և անհրաժեշտության պարագայում այն օգտագործվում է:



Հաստատության բացօթյա մարզադաշտ տանող ճանապարհը ևս մատչելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հաստատության երկրորդ և երրորդ հարկերում առկա չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի սանհանգույցներ:

Հաստատության վթարային ելք տանող ճանապարհը աստիճաններով էր ու առանց բռնաձողերի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 10-ին հաշմանդամություն ունեցող անձի հետ համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ:

Ուշադրության է արժանի այն, որ Ցանկում ընդգրկված կառուցված ուսումնական հաստատության «ավարտված» կարգավիճակի ու աշխատանքների փաստացի կատարվածության միջև արձանագրվել է անհամապատասխանություն, քանի որ Հաստատությունն այցի պահին ամբողջությամբ նոր կառուցված չէր:

Հաստատության ոչ բոլոր մուտքերն էին մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ գլխավոր մուտքի թեքահարթակը չուներ երկրորդ բռնաձող, մինչդեռ, Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնաձողերով պատնեշներ:

Հաստատության գլխավոր մուտքի և Հաստատության ներսի դռները հիմնականում ունեին շեմեր, մինչդեռ Հավելվածի 5.2.11-րդ կետի համաձայն՝ դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:

Հաստատության ոչ բոլոր մուտքերի սանդուղքներն ունեին բռնաձողեր:

Հաստատության երկրորդ հարկ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով, քանի որ Հաստատությունում առկա չէր վերելակ:

Հաստատությունում առկա չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի սանհանգույց: Առաջին հարկի սանհանգույցների մուտքի դռները ունեին շեմեր, իսկ ներսում առկա էին առանց դռների միմյանցից առանձնացված երեք զուգարանակոնքեր: Երկրորդ հարկում առկա էր միայն մեկ սանհանգույց՝ նախատեսված տղաների համար:

Հաստատությունն ուներ երկու մարզադահլիճ, որոնք գտնվում էին առաջին հարկում, սակայն այնտեղ տանող ճանապարհը մատչելի չէր: Մարզադահլիճներից մեկի մուտքը անհարթ էր և նույնպես ոչ մատչելի: Հանդերձարաններում չկային սանհանգույց և լոգարան, իսկ դռների վրա բացակայում էին տեղեկատվության նշանները, մինչդեռ Հավելվածի 5.6.11-րդ կետի համաձայն՝ Շենքի ներսում սենքերի տեղեկատվության նշանակումները պետք է կրկնօրինակվեն ռելիեֆային նշաններով և տեղադրվեն դռան մոտ, բռնակի կողմից և ամրացված լինեն 1,4-1,75 մ բարձրության վրա: Հանդերձարաններում և զգեստապահարաններում համարակալումը պետք է լինի ռելիեֆային և կոնտրաստ ֆոնի վրա:

Հաստատության հանդիսությունների սրահը ևս գտնվում էր առաջին հարկում՝ մարզադահլիճների հարևանությամբ: Սրահի մուտքից դեպի բեմ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 14-ին մշտադիտարկման այց են իրականացրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Հաստատություն):

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Ցանկով կառուցված և «ավարտված» կարգավիճակ ունեցող Հաստատությունում առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված որոշ խնդիրներ, թեև տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Հաստատությունը նոր կառուցված էր, և շինարարական աշխատանքները ավարտվել էին 2023 թվականին:

Հաստատության մուտքերից ոչ բոլորն էին մատչելի, տարածքը՝ ներառյալ գլխավոր մուտքը, գտնվում էին մեկ հարթության վրա՝ առանց նիշերի տատանման: Գլխավոր մուտքի թեքահարթակը չուներ երկրորդ բռնածող, մինչդեռ, Հավելվածի 5.3.6-րդ կետի համաձայն՝ բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնածողերով պատնեշներ:

Հաստատությունում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի ապահովման նպատակով առկա էր մատչելի ուղղահայաց վերելակ, որն ապահովում էր առաջին և երկրորդ հարկերի միջև կապը, սակայն չէր ծառայում նկուղ իջնելու համար:

Հաստատության հանդիսությունների սրահը գտնվում էր առաջին հարկում, սակայն մուտքից դեպի բեմ հնարավոր էր հասնել միայն աստիճաններով: Բացի այդ նստարանների մեջտեղում գտնվող միջանցքն ընդհատումներով էր:



Հաստատության սանհանգույցները մատչելի չէին:

Մարզադահլիճը գտնվում էր առաջին հարկում, տղաների և աղջիկների հանդերձարաններում կային սանհանգույց և լոգարան, որոնք մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այցի ընթացքում արձանագրվել էր նաև ջրահեռացման հետ կապված խնդիր: Հաստատության տարածքում բացակայում էին առվակները, ինչի հետևանքով տեղի են ունենում ջրի մեծ կուտակումներ, որոնք կարող են առաջացնել նստվածքներ և հետիոտնային ճանապարհները դարձնեն անհարթ և ոչ մատչելի:

Արձանագրվել են նաև խնդիրներ Հաստատության նախագծանախահաշվային փաստաթղթերի և փաստացի կառուցված շինության միջև: Այսպես, օրինակ Հաստատության նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան էջերի գծագրերի միջև և նշված էջերի գծագրերի և կառուցված թեքահարթակի միջև առկա է անհամապատասխանություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է փաստել, որ ՄԻՊ ոլորտային փորձագետի դիտարկմամբ հնարավոր էր առաջնորդվել Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերով, քանի որ այցի պահին արձանագրվել էր, որ կար բավարար տարածություն թեքահարթակը նշված տարբերակով կառուցելու համար:

Կառուցված թեքահարթակ

Թեքահարթակի գոյություն ունեցող տեսքը (դիագրամում կարմիր գույնով նշվածը) Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերի համեմատությամբ



Նույն բնույթի անհամապատասխանություն է արձանագրվել նաև Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան էջերի գծագրերի և գլխավոր մուտքի կառուցված թեքահարթակի միջև: Տվյալ դեպքում նույնպես ՄԻՊ ոլորտային փորձագետի դիտարկմամբ հնարավոր էր առաջնորդվել Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերով, քանի

որ այցի պահին արձանագրվել էր, որ կար բավարար տարածություն թեքահարթակը նշված տարբերակով կառուցելու համար:

Կառուցված թեքահարթակ

Թեքահարթակի գոյություն ունեցող տեսքը (դիագրամում կարմիր գույնով նշվածը) Հաստատության նախագծի ճարտարապետական մասի համապատասխան հատվածում արտացոլված թեքահարթակի գծագրի չափերի համեմատությամբ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված մշտադիտարկման այցերը և նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում են, որ ուսումնական հաստատությունների նոր կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացում առկա են մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված մի շարք համակարգային խնդիրներ: Դրանցից որոշներին անդրադարձ է կատարվել նշված զեկույցի շրջանակներում:

Դրանք, մասնավորապես, վերաբերել են.

- ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերում մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված խնդիրներին:
- փաստացի կատարված շինարարական աշխատանքների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներին:
- նախագծային փաստաթղթերի և փաստացի կատարված շինարարական աշխատանքների անհամապատասխանության հետ կապված խնդիրներին:
- Ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների փաստացի կարգավիճակի և Որոշմամբ նշված «կառուցված», «հիմնանորոգված», «վերակառուցված», «ավարտված» կարգավիճակների միջև անհամապատասխանության հետ կապված խնդիրներ:

Ընդ որում, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիության ապահովման հետ կապված այլ խնդիրներ ևս, որոնց անդրադարձ կկատարվի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման շրջանակներում: Անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներն անմիջապես հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին:

Հաշվի առնելով զեկույցի շրջանակում մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված խնդիրները՝ առաջարկում ենք.

1. միջոցներ ձեռնարկել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդրման կամ դրանց կատարելագործման ուղղությամբ:

2. միջոցներ ձեռնարկել շենքերի և շինությունների, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների նոր կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացում մատչելիության սկզբունքների պահպանումն առանց բացառության ապահովելու ուղղությամբ:

3. միջոցներ ձեռնարկել թույլտվություններ տրամադրելու և վերահսկողություն իրականացնելու գործընթացներում ներգրավված իրավասու մարմինների ներկայացուցիչների՝ մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշների և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող թեմաներով շարունակական վերապատրաստումներ իրականացնելու ուղղությամբ:

4. միջոցներ ձեռնարկել շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովման նպատակով առկա վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

5. միջոցներ ձեռնարկել շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովման հետ կապված արձանագրված խնդիրների հիմքում ընկած պատճառների խորքային ուսումնասիրության, բազմոլորտ քննարկումների կազմակերպման, այդ թվում՝ շահագրգիռ անձանց ներգրավմամբ դրանց կազմակերպման, և այդ խնդիրների լուծման ուղղությամբ գործնական քայլերի իրականացման ուղղությամբ: